ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՈՒՍՏԱ ԿԱՐՈ» ԱՆԱՎԱՐՏ ՎԵՊՈՒՄ

/վեպի ստեղծագործական պատմությունից/

Ա.Բ.ԽՈՐԵՆՅԱՆ

Ավ. Իսահակյանի «Ուստա Կարո» վեպում /առաջին տարբերակ/ առանցքային տեղ ունի ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը՝ ի դեմս դրա հիմնական կրող Հայ Հեղափոխական Դաշնակցության: Մինչև 1903թ. Դաշնակցության նպատակը Արևմտյան Հայաստանում, ուր հայ ժողովուրդը ենթարկվում էր ֆիզիկական բնաջնջման, ազգային-ազատագրական պայքարի կազմակերպումն էր: Ինչպես կարծում էր նորաստեղծ կուսակցությունը, այդ պայքարը պետք է Եվրոպային հարկադրեր իր ուշադրությունը սևեռել Հայկական հարցի վրա և լուծում տալ գրան: 1903թ. Նիկոլայ II ցարի հրամանով հայ եկեղեցական կալվածքների ու գույքի գրավումը և հայկական դպրոցների փակումը, որոնք ուղղված էին հայ հոգևոր կյանքի ամլացմանը, Դաշնակցությանը ստիպեցին խաղաղ միջոցներով պայքարի ուղիներ մշակել նաև Հայաստանի արևելյան հատվածում՝ Ռուսական կայսրության դեմ: Այդ մասին Դաշնակցության հայտնի գործիչ Ռուբենը գրում է.«... ինչ զոհերով ալ լինի, պահել ազգային ինքնուրույնությունը, սուրբ համարել ինչ որ ազգային է, ոչ թե սուրբերուն զոհ մատուցանել, այլ թուրք և ռուս բռնակալության վերացման համար ոչ մեկ զոհ չխնայել»[1]: Ռուսական կայսրության վարած քաղաքականության մասին Իսահակյանը ծրագրային գրառումներից մեկում նշում է. «Վեպի մեջ հաճախ խոսվում է ռուս պետության հայահալած գործերի մասին – դպրոցների փակում, կալվածքների գրավում, բանտ, ռուսացում, կրոնափոխություն, հող չտալ, հողը ռուսներին տալ, թուրքերին չոյում, երես տալ»[2]:

Վեպի իրադարձությունները տեղի են ունենում ահա այս մթնոլորտում: Իսահակյանը ներկայացնում է դաշնակցության Կարսի կազմակերպությունը՝ իր կառույցներով և խնդիրներով, որոնց գործունեության հենքին խարսխված՝հիմնականում կատարվում են գործողությունները «Նախճվանում»՝ գլխավոր հերոսի՝ Ուստա Կարոյի «աթոռանիստ» գյուղում: Գրառումներից մեկում Իսահակյանը մի լրացում է արել.«Նախճվանը մեծ մասով դաշնակցությամբ կազմակերպված գյուղ էր. ուներ բազմաթիվ դաշնակցական երկսեռ խմբեր. Ուստան մի խմբի՝ «Ղևոնդ Երեց» անդամ էր, խմբերը կազմել էին մի ենթակոմիտե, որը ենթարկվում էր Կաղզվանի կոմիտեին, Ղարսի Կ. Կոմիտեին»[3]: Սա հուշում է, որ Կարոյի ապրած գյուղի ընտրությունը պայմանավորված է նաև այս հանգամանքով: Իր նամակներից մեկում Իսահակյանը վեպի մասին գրում էր. «Նյութը շատ հետաքրքրական է. Շիրակի կյանքից. գյուղ ու քաղաք, շատ տիպեր,

---

[1] *Ռ ո ւ բ ե ն , Հայ հեղափոխականի մը հիշատակները, Թեհրան, 1982, էջ՝ 48:*

[2] *Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Իսահակյանի ֆոնդ, 372-II:*

[3] *Նույն տեղում, 396-II, էջ՝ 7:*

Դաշնակցության գործունեությունն իբրև Ֆոն, բայց բարդ կազմվածքով և հավատացած եմ, լավ գրված»[4]:

Վեպի սկզբում, հենց առաջին էջերից, ուր նկարագրվում է Բագրանի իշխանների կազմակերպած խնջույքը իր ժողովրդի կենսակերպի հին արհեստը բանեցնող, սուն ու աղբյուր կառուցող Ուստա Կարոյի պատվին, ներկա է նաև Դաշնակցության շրջիկ-քարոզիչը՝ Կայծակը: Սեղանակիցների մեծ հարգանքը վայելող շրջիկը ոգեշունչ ճառ է ասում՝ քարոզելով ուխտագրվել Հայրենիքի պաշտպանության զոհասեղանին: Նրա ճառը խոր հուզմունքով են լսում հավաքվածները, իսկ Կարոյի հոգին խռովվում է, նա զգում է, որ իր մեջ ինչ-որ անսովոր, կարևոր բան է կատարվում: Ուստան սկսում է հասկանալ, որ իր կյանքը կարող է իմաստավորվել Հայրենիքին ծառայելով: Բայց սա դեռ սկիզբն է, դեռ ժամանակ ու պայմաններ են անհրաժեշտ տարերային այս մղումի իմաստավորման համար: Ծրագրային մեկ այլ գրառման մեջ Իսահակյանը նշում է.«...վեպի սկզբից ետ Կարոյի մեջ նշմարվի հայրենասիրությունը, որի սաղմերը զարգանան կամաց-կամաց»[5]: Կայծակն է այն մարդը, որը պետք է հասունացնի Կարոյի միտքը, հուզի նրա սիրտն ու հոգին, մղի նրան՝ նվիրվելու իր ժողովրդի ազատագրության պայքարին: Եվ վեպի հետագա գործողությունների ընթացքում այս բանի գիտակցումը ամրագրվում է Կարոյի հոգում: Նա շփվում է նաև Կայծակի թիկնապահների հետ, երևակայությամբ նրանց միանում կռվի դաշտում, տեսնում այն հեքիաթային հերոսներին, որոնց հետ նրանք կռվել են կողք կողքի: Լսելով այս հերոսներին՝ Կարոն հասկանում է, որ ազգի փրկության գործը ամեն մի հայի սրբազան պարտականությունը պետք է լինի:

Վեպն անդրադառնում է ֆիդայական շարժմանը, նրա ղեկավարներին: Հայդուկային պայքարն արդեն իր անդրադարձը գտել էր Իսահակյանի ստեղծագործությունում դեռ 1896 թվականից՝ «Հայդուկի երգերից» շարքով, որի առանձին բանաստեղծություններ տպագրվում էին Դաշնակցության «Դրոշակ» ամսաթերթում՝ «Հայ գուսան» ստորագրությամբ: Աղբյուր Սերոբին, Սեբաստացի Սաքոյին, Մենակին, Ավետիք Մալոյանին և մյուսներին նվիրված ստեղծագործություններն իրենց կյանքը Հայրենիքին նվիրարարած հերոսների սխրանքի ու անմահության գովքն են: Նրանց բոլորին միավորում էր գաղափարի, նպատակի ընդհանրությունը: Գաղափարակիր այս հերոսի կերպարը հառնում է յուրաքանչյուր ստեղծագործությունում: Հայրենիքը և հերոսը միաձույլ են: Ֆիդայիներից ամեն մեկը իր մեջ կրում է Հայրենիքի վեհ, նվիրական կերպարը, որ դառնում է ուխտ, ինքնազոհաբերում: Նրանց սխրանքը գովերգող բանաստեղծի հոգում անմխիթար վիշտ կա, քանզի պայքարի ճանապարհը նահատակության ճանապարհ է, որ, ավա՜ղ, փրկություն չի բերում.

Անհավասար, գոռ կռվի մեջ
Ընկաք, իմ վեհ ընկերներ՝[6]:

Հեղինակի այս զգացողությունը պայմանավորում է շարքի ամբողջականությունը: Եթե հիշենք Իսահակյանի՝ 1894թ. մի գրառումը «Հիշատակարանում», ուր դրսևորվում է սեփական ուժերով Հայրենիքն ազատելու մտայնության նրա գնահատականը, ապա հասկանալի կլինի բանաստեղծի

---

[4] Հայրենիք, Բոստոն, 1957, N 12, էջ 4:
[5] ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, 294-II:
[6] Ավ. Իսահակյան, Հայդուկի երգեր, Ե., 1990, էջ 62:

կերտած հայդուկի կերպարը՝ հերոսականության ու ողբերգականության համաձուլվածքով: «Մինչև այժմ ես այն կարծիքին էի, որ պիտի կռվել և Տաճկահայաստանը ձեռք բերել – իբրև ազատ երկիր- անկախ նույնիսկ ուրիշ ազգերի միջամտությունից, միայն մեր արյունի շնորհիվ, բայց Սասունի կոտորածի լուրը ինձ փոխեց. այս ճամփով տաճիկը մեզ կջնջե վերջնականապես աշխարհի երեսից, նրանք ունեն զորք, զենք, թնդանոթ և փող, իսկ մենք ոչինչ և սոված <ենք>... Նրանք մեզ հում-հում կուտեն»: Եվ ելքը գտնում է Ռուսաստանի հետ լինելու մեջ.« Պետք է ջարդել և փշրել տաճիկին հօգուտ Ռուսաստանի: Շատ-շատ լավ կլինի, որ Ռուսաստանը գնա և ողջ Հայաստանը տիրե»[7]:

Իսահակյանը նպատակ է ունեցել «Ուստա Կարոյում» «Հայդուկի երգերի» սկզբունքով կերտել ֆիդայու՝ հայ ազատամարտի հերոսի իրական, պատմական նկարագիրը: Մեծ հայդուկապետի՝ Անդրանիկի անունը թունդ է հանում Կարոյի հոգին: Կայծակի թիկնապահները տեսել են, թե ինչպիսի քաջությամբ է նա կռվում.«Անդրանիկ ջան, Անդրանիկ,որ քարի տակ չմտավ ու հրացանը չբացեց,տեղնուտեղը փաշան փախավ...»[8]: Այդպես հերոսաբար կռվել են նաև Հրայրը, Թումանը, Մուրադը, Մենակը: Ոգևորված Կարոն բացականչում է.«Պա՜հ...պա՜հ, ի՜նչ տղամարդիկ եք եղել,հաստատ որ ասլանի քաջեր...»[9]: Բայց դառնանում է Կարոն, երբ լսում է Աղբյուր Սերոբի սպանության մասին՝ « վասակ » հայի մատնությամբ:

Թեպետ առաջին տարբերակում ֆիդայական պայքարի մասին սեղմ է խոսվում, սակայն Իսահակյանի ծրագրային գրառումներից պարզ է դառնում, որ հետագայում իր վեպում ազգային-ազատագրական պայքարը ընդարձակ ներկայացնելու նպատակ է ունեցել: Առանձին մի տետրում նա վեպի համար երգեր է հավաքել, այդ թվում և ֆիդայական: «Առաջին երկրորդական տետրակ» վերնագրված ինքնագրում զետեղված է ազատամարտիկներին նվիրված մի ձոն-բանաստեղծություն՝ «Թաթոս վարժապետի ողջերթի ոտանավորը Ուստին ուղղված».

Դուք ժողովրդի ազնիվ զավակներ,
Սուրբ ազատության հուրն է ձեր սրտում,
Վառեք, բորբոքեք, քարեր ու սրտեր
Ձեր կյանքով շնչող մայր հայրենիքում[10]:

Գաղթական մի հայից՝ Ռես Հոսեից, որի կերպարի միջոցով հեղինակը կենդանի ու հավաստի է դարձնում սուգի ու արյան մեջ գտնվող Երկրի վիճակի նկարագրությունը, Ուստան լսում է նաև Գևորգ Չաուշի՝ անհաղթ քաջի անունը.« Էն Սասնա սարերի արծիվն է, որ կիջնա Մշու դաշտ, կը զարնե թշնամին ու նորեն կերթա, կը թռնի Անդոկա սար, ծիրին-կատար»[11]:

Հետաքրքիր է, որ ֆիդայիների մասին պատմությունները սովորական չեն. այդպես ժողովուրդը պատմում է առասպելը կամ էպոսը, այդպես ոչ սովորական լինում են հեքիաթի հերոսները: Սա խոսում է այն մեծ սիրո մասին, որ ուներ ժողովուրդը իր սիրելի զավակների հանդեպ: Պատմելու այս ձևը գալիս էր ժողովրդական ստեղծագործությանը՝ էպոսին անդրադառնալու Իսահակյանի փորձից: Էպոսի նմանությամբ ստեղծված «Մասսա

---

[7] Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Ե., 1977, էջ 94:
[8] ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, 285-II, էջ 88:
[9] Նույն տեղում:
[10] Նույն տեղում, 288-II, էջ 19:
[11] Նույն տեղում, 291-II, էջ 83:

Մանուկի» հերոսը նույն քաջն է, որն իր ազատագրական պայքարն է մղում բռնակալի՝ Դև Սուլթանի դեմ: Ժողովրդական էպոսի ազատատենչ հերոսի հոգևհարազատությամբ պետք է կերտվեր նաև անվախ ֆիդայու կերպարը «Ուստա Կարոյում»: Ընդհանրապես, առասպելականի՝ միֆի և իրականի միահյուսումը վեպի կառուցվածքային առանձնահատկություններից է:

Այն, որ Իսահակյանը մտադրություն է ունեցել ֆիդայական պայքարին իր գրքում մեծ տեղ տալ, հավաստում են նաև հետևյալ գրառումները. «Ֆիդահիները պատմում են իրենց ըմբոստական կյանքից վիպական դրվագներ, որսում վայրի երեներ, հրացանների սվիները շամփուր շինած՝ խորովում են միսը: Ֆիդահու սիրած աղջիկը փախցնում են, ավերակ վանքերի մեջ պսակում՝ սուրերը խաչ կապած, և հարսը ֆիդահու հագուստով, զինված, պտտվում է իրենց խմբի հետ, կռվում, զարկում ու դարկվում»[12]: Ֆիդայու՝ այլևս ինքն իրեն չպատկանելու, այլ ազգի նվիրյալ դինվորը լինելու անխախտ երդումը պայմանավորված է պատերազմական դաժան օրենքներով ու նաև ֆիդայու բարոյական նկարագրով. սա իր արտահայտությունը պետք է գտներ հուզիչ մի պատմության մեջ, ուր «քաջ, ասպետական, ազնիվ, անձնվեր, սուրբ մարդ» սասունցի Թորոն, որ Գևորգ Զաուշի խմբից էր, ստիպված էր իր սիրած կնոջը՝ Շուշոյին սպանել, որովհետև անհնարին է թշնամու կողմից պաշարված, այրվող տնից հիվանդ կնոջը դուրս բերել: Ելքը մեկն է, և Զաուշի հրամանը Թորոն պետք է կատարի: Ֆիդայու կինը իր տղամարդու սրտի և հոգու հավատակիցն է՝ Շուշոն համբուրում է ամուսնու ձեռքն ու դաշույնը, որ փրկելու է իր պատիվը, և օրհնում նրան: «Ազգի համար մատաղ արեց իր սերը»[13],- գրում է Իսահակյանը:

Հերոս ֆիդայիների մասին պատմությունները ուղեկցվում են Կայծակի և Դաշնակցության մյուս ներկայացուցիչների ճառերով, որոնք վառում են Կարոյի երևակայությունը: Իր ոգեշունչ խոսքում, հիշատակելով նրանց անունները, անմահ փառքը՝ շրջիկը նշում է այն ճանապարհը, որ տանում է դեպի անմահություն: Դա հայրենիքի և ազատության ճանապարհն է. «Նրանց անունները աստղերի պես հավիտյան կապրեն և կփայլեն ազգի գլխի վերևը, որովհետև նրանք աղբյուր եղան ուրիշի համար, որ անուշ երգերով պիտի երթան հավիտյան՝ գաչտերը կենդանացնելով: Այստեղ է ասել Եղիշեն-մահ կա՝ մահ է, մահ կա՝ անմահություն է»[14]: Անմահության այս զգացողությունը Կարոն ունենում է Անիում, երբ հաղորդակից է լինում իր հոգևոր սկզբին, հոգևոր գոյի իր ակունքներին՝ իր պատմությանը, ոգեղեն արժեքներին, և նրա մեջ արթնանում է ցեղի, ազգի ինքնագիտակցումը: Կածակը հասկանում է, որ գործ ունի ներքին մեծ ուժ ու հավատի տեր մարդու հետ, մարդու այն տեսակի, որը կարող է գաղափարի նվիրյալը լինել: Թեև Կարոն մինչ այդ արդեն եղել էր Անիում, սակայն ենթակոմիտեի անդամներ Հովակի, Թաթոսի և մյուսների հետ այցելությունը լրջորովին նոր իմաստ է ձեռք բերում: Անիի գեղեցկությունը և ողբավեր վիճակը վեհացնում ու դառնացնում են Կարոյի հոգին: Իր անանուն լուության մեջ Անի քաղաքն է՝ հայի տառապանքի ու ոգեղենության խորհրդանիշը:

---

[12] Նույն տեղում, 327/2-II:
[13] Նույն տեղում, 372-II:
[14] Նույն տեղում, 397-II:

– Պարոն Կայծակ, ու՞մ չորացած ձեռքն է քանդել մեր Անին,– հարցնում է Կարոն:

– Ռուսի, Թուրքի, Թաթարի, քրդի[15]:

Կարճ ու միանշանակ այս պատասխանը մեր ցավի ու երթի դաժան պատմությունն է: Սրբացած Անիի ավերակ եկեղեցուն համահունչ է Կայծակի սրտաբուխ խոսքը, որ ասվում է այն քաջերի մասին, որոնք նահատակի անունն ունեցան: Թախիծով լի՝ նա իր բաժակը բարձրացնում է նրանց սուրբ հիշատակի համար. «Այս նվիրական վայրում խմենք հայ նահատակների հոգու անմահության թասը: Տա՛ աստված, որ զուր չկորչի մեր ծովերով թափած արյունը»[16]:

Նահատակների հոգու անմահության թասը խմող Կայծակի երկրորդ միտքը ծնվել է հեղինակի խոհ-կասկածից. արդյո՞ք նրանց թափած արյունը իր նպատակին կհասնի: Կայծակի խոսքին հետևում է Թաթոսի լրացումը նաև նրանց մասին, ովքեր գտնվում են Թուրքական բանտերում. «–Այո, սուրբ է գաղափարի համար բանտերում փտելը, գնդակահար լինելը – մեր ուխտն է դա, մեր խաչը»[17]:

Անիի սրբազան եկեղեցում Կարոն զգում է իր նախնիների, իր արյան կանչի մեծ ուժը: Անիին հաջորդում է Գյումրին, ուր հերոսը ներկա է լինում դաշնակցականների ժողովին: Այստեղ հայ կնոջ ներշնչող երգից հետո՝

– Գնա՛, եղբայր, աստված քեզ հետ,
Ազգի սերը քաջալեր,
Գնա՛, թեև չեմ կարող գալ.
Բայց իմ հոգին քեզ ընկեր...[18],

Կարոն հասու է դառնում անբեկանելի մի ճշմարտության.«Մարդ մի անգամ պիտի մեռնի, երանի ազգի համար մեռնողին»[19]:

Առաջին տարբերակում, ինչպես նաև այլ գրառումներում, հեղինակը իր հերոսներից մեկի միջոցով քննադատում է նաև քրիստոնյա աշխարհին՝ Եվրոպային:Գաղթական Ռեսը պատմում է Կարոյին, որ Թուրքերը հայերին կոտորեցին ու մորթեցին խաչապաշտ ազգերի աչքի առաջ: Այդ բոլոր սարսափները տեղի ունեցան ի տես եվրոպական պետությունների, և նրանք անհոգաբար զոհաբերեցին մի բուռ ժողովրդի: Հայ բնաշխարհի մի անկյունում ապրող անուս գեղջուկի մտածողության մեջ ու ընկալումներում, իհարկե, այս հարցը չէր կարող տեղավորվել: Եվ եթե առաջին տարբերակում Իսահակյանը փորձել է Ռեսի լեզվամտածողությանը հարմարեցնել քննարկվելիք նյութը. «Էդ անաստվածները մատը մատին չզարկեցին մեզի օգնելու, կանգնել էին թամաշա, իրենց փեշի տակ ապաստանող որբին տալիս էին ասկյարի ու քրդի ձեռքը»[20], ապա գրառումներից մեկում այս միտքը արտահայտում է Դաշնակցության կողմից գյուղում նշանակված վարժապետը: Մեկ ուրիշում՝ Կայծակը: Այսօրինակ մտայնության շարունակությունն են նաև գլխավոր հերոսի՝ Կարոյի դատողությունները՝ հայ ժողովրդի դարավոր տառապանքի, ցավի ու գալիքի անորոշությունից ծնված: Հեղինակը հետագայում սա նույնպես որոշել էր մտցնել Կայծակի

---

[15] Նույն տեղում, 285-II, էջ 189:
[16] Նույն տեղում, էջ 193:
[17] Նույն տեղում:
[18] Նույն տեղում, 285-II, էջ 213:
[19] Նույն տեղում:
[20] Նույն տեղում:

հատի մեջ իբրև կրթված, զարգացած և Դաշնակցության գաղափարախոսությունը կրող մարդու մտածողություն: Այդ հատվածը Իսահակյանը պայմանականորեն վերնագրել է « Իմ ժողովուրդ, Հոբ Երանելու նման...»: Հերոսը մտովի դիմում է ժողովրդին, որը կրում է իր ծանր խաչը՝ չկորցնելով հավատի ու հույսի աստվածային համբերությունը, որով էլ նմանվում է Աստվածաշնչի Հոբ Երանելուն: Եվ գուցե, իբրև արարչի վարձատրություն այս ծով համբերության, կգա փրկության ու արդարության օրը.«Եվ անխորտակելի ու անմահ հավատով սպասում ես հարության փողի հրաշավառ կոչին, երբ որդիներդ վեր նետեն գերեզմանների քարերը, պիտի խորտակեն բանդ ու շղթա, պիտի սուրան քեզ մոտ, և պիտի գոցվին վերքերիդ խոցերը, և միասին պիտի ներբողենք փրկության և առողջության մեծ օրը»[21]:

Հետագայում վեպի այս հատվածը՝ իր ժողովրդի դաժան ճակատագրի նմանօրինակ փիլիսոփայական խորհրդածությունը, դարձավ առանձին ստեղծագործության նյութ. 1934թ. Իսահակյանը գրեց «Հոբ Երանելու ծառը: Դանկրեժ Սլեմանը» պատմվածքը:

1915-20-ական թվականները Հայաստանի համար կորուստներով ու սարսափելի գազանությամբ լեցուն եղան: Հզոր տերությունների քաղաքական խաղերում տանուլ տված Հայաստան աշխարհը ամփոփվեց մի թզաչափ տարածքի մեջ: Հայրենի երկրի օրհասին վկա եղած բանաստեղծի աշխարհայացքում շատ բան փոխվեց, փոխվեց նրա վերաբերմունքը հայ քաղաքական կուսակցությունների հանդեպ, որն էլ արտացոլվեցվեպի կառուցվածքում ու ծրագրային գրառումներում: Որոշ գրառումներում Իսահակյանը բացասական վերաբերմունք է դրսևորել նաև Դաշնակցության նկատմամբ, սակայն այս ամենը գոյավորվում է ազգային քաղաքականության՝ Իսահակյանի փիլիսոփայական մտորումներում, իսկ ազգային- ազատագրական պայքարին նվիրված ակնիվ հոգիների հանդեպ մեծ սերը մարմնացավ նրա ստեղծագործության մեջ:

ОТРАЖЕНИЕ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ В НЕОКОНЧЕННОМ РОМАНЕ АВЕТИКА ИСААКЯНА ,,УСТА КАРО,,

(из истории создания романа)

А.Б.ХОРЕНЯН

Резюме

В творчестве Ав. Исаакяна особое место занимает неоконченный роман ,,Уста Каро". В первом варианте романа и плановых записях отражена идеология национально-освободительного движения, к которой приходит и главный герой романа Каро. Исаакян хотел отобразить на страницах романа образы фидаи и их борьбу.

[21] Նույն տեղում, 288-II, էջ 19: